*Հաստատված է*
*Հայաստանի եվրոպական համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2023 թվականի հունիսի 28-ի*
*թիվ 44 նիստում*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

*Approved by*
*the Scientific Council of the European University of Armenia*
*June 28, 2023*
*At the session N44*
*Rector: H. Bisharyan*

(ստորագրություն, Կ.Տ./signature)

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ**
**(նոր խմբագրություն)**

**REGULATIONS ON**

**ALLOCATION OF SUBSIDIES AND SCHOLARSHIPS TO THE STUDENTS OF THE EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA.**
**(new edition)**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանի (այսուհետ Համալսարան, ՀԵՀ) ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ և մասնակի փոխհատուցման, ինչպես նաև կրթաթոշակների հատկացման կարգը և պայմանները:

1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշումը, այլ իրավական ակտեր:

1.3. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով

## 1. GENERAL PROVISIONS

1.1. This regulation defines the procedure and conditions for the full and partial reimbursement of tuition fees in the form of student benefits of the European University of Armenia (hereafter the University, EUA), as well as the allocation of scholarships.

1.2. The legal bases of this regulation are the RA Laws "On Education" and "On Higher and Post-Graduate Professional Education", University Charter, 2006 RA Government Decision No. 1183-N of July 27, other legal acts.

1.3. The provisions of this regulation apply to students with RA citizenship who are enrolled in Bachelor's and Master's

առկա և հեռակա ուսուցմամբ սովորող ՀՀ քաղաքացիություն ունեցող ուսանողների վրա:

educational programs and are studying both full-time and part-time .

1.4. Ազգությամբ հայ օտարերկրացի ուսանողները ուսումնական նպաստի իրավունքից կարող են օգտվել համապատասխան ֆակուլտետի առաջարկությամբ և Համալսարանի ռեկտորի որոշմամբ՝ հաշվի առնելով բարձր առաջադիմությունը (81 և ավել գնահատականի դեպքում), ուսումնակրթական հաջողությունները, Համալսարանի հեղինակության բարձրացմանը միտված նախաձեռնությունները:

1.4. Foreign students of Armenian nationality can use the right to study loan with the recommendation of the relevant faculty and the decision of the Rector of the University, taking into account high progress (in the case of a score of 81 and above), academic success, initiatives aimed at increasing the reputation of the University.

1.5. Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բուհ ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի, մարտական գործողություններին մասնակցած, պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված և այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում:

1.5. Tuition fee compensation in the form of a loan is given to students who have been admitted to the university based on the results of the competition, who have high progress in the results of the academic year, who are socially insecure, who are residents of border communities receiving social support, who have participated in military operations, who have been admitted with purposeful training in majors of priority and importance for the state, and who have other status according to the legislation of the Republic of Armenia and in cases provided by this regulation.

1.6. Պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների ցանկը և քանակը հաստատում է ՀՀ կառավարությունը, ինչպես նաև սահմանված կարգով փոխհատուցում է այդ ուսանողների նպաստը:

1.6. The RA Government approves the list and number of specialties in the fields of priority and importance for the state, and also compensates the loans of these students in accordance with the established procedure.

## 2.ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## 2. PROCEDURE AND TERMS OF ALLOCATION OF STUDENT LOANS

2.1. Ուսանողական նպաստը ուսանողի ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում է՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման, Համալսարանի ֆինանսական միջոցների, հիմնադրամների և այլ կազմակերպությունների, ֆիզիկական անձանց, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

2.1. The student loan is a full or partial reimbursement of the student's tuition fees at the expense of funding from the RA state budget, financial resources of the University, foundations and other organizations, individuals, as well as other sources not prohibited by RA legislation.

2.2. Համալսարանը նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ և մասնակի փոխհատուցում տրամադրում է՝ մրցութային հիմունքներով՝ կախված խմբերում սովորողների ընդհանուր թվից այդ թվում. (Հավելված 1)

2.2. The university provides full and partial reimbursement of tuition fees in the form of a loan, on a competitive basis, depending on the total number of students in groups, including: (Appendix 1)

2.2.1. ընդունելության քննության արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցմամբ սովորողներին:

2.2.1. according to the results of the entrance exam, students with the highest grades of the Bachelor's educational program.

2.2.2. Հաջորդ կուրսերում մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող բակալավրի կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցմամբ սովորողներին:

2.2.2. iIn the following academic years to the full-time and part-time students of the Bachelor's educational program with the highest progress according to the results of exams and tests of one academic year.

2.3. ուսման վարձավճարի լրիվ (100%) փոխհատուցման կարող են հավակնել այն դիմորդները, ովքեր յուրաքանչյուր քննական առարկայից ստացել են 91 և բարձր գնահատական:

2.3. Applicants who scored 91 or higher in each exam subject can claim full (100%) tuition reimbursement.

2.4. ուսման վարձավճարի մասնակի (50%) փոխհատուցման կարող են հավակնել այն դիմորդները, ովքեր յուրաքանչյուր քննական առարկայից ստացել են 81 և բարձր գնահատական:

2.4. applicants who have obtained a score of 81 or higher in each exam subject can claim a partial (50%) tuition fee reimbursement.

2.5. Ուսման վարձի փոխհատուցմամբ բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ մրցութային կարգով բուհի ընդունելության քննությանը կարող են մասնակցել նաև ջավախահայ և արցախահայ դիմորդները, ինչպես նաև այն դիմորդները, ովքեր լինելով օտարերկրյա քաղաքացի ավագ (միջնակարգ) դպրոցն ավարտել են ՀՀ-ում և ունեն ՀՀ ԿԳՄՍՆ կողմից տրված կրթության ավարտական փաստաթուղթ (ատեստատ):

2.5. Javakh-Armenian and Artsakh-Armenian applicants, as well as those applicants who, being foreign citizens, have left high school in the RA and have an education graduation certificate issued by the RA Ministry of Education and Culture can participate in the competitive university admission examination with the full-time education program under the Bachelor's educational program with tuition fee compensation.

2.6. Մագիստրոսի կրթական ծրագրի առկա ուսուցմամբ սովորողներին ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրվում է պետության կողմից հատկացված ընդունելության անվճար տեղերի քանակով: Նշված տեղերը բաշխվում են բուհի մասնագիտությունների համամասնությամբ՝ հիմք ընդունելով սովորողի բարձր առաջադիմությունը:

2.6. Full tuition reimbursement is provided to students who are currently enrolled in the Master's education program based on the number of free admission places allocated by the state. The specified places are distributed equally to the specialties existing at the university, based on the student's high progress.

2.7. Համալսարանը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝

ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս,

2.7. The university provides partial tuition reimbursement in the form of a student loan to at least ten percent of the students studying in paid educational system, in the amount of at least seven percent of the budget generated from student fees, at its own expense, based on high progress and social group, in the presence of relevant documents:

a) socially insecure students (families with a score higher than the marginal score of family insecurity) - 30 percent,

b) 50 percent for students left without parental care after turning 18 until turning 23,

c) 50 percent for uniparental (single-parent) students under the age of 23,

բ) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ 50 տոկոս,

գ) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս,

դ) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս,

ե) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս,

զ) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս,

է) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին (զինվորական գրքույկում համապատասխան գրառման առկայության պարագայում)՝ 30 տոկոս,

ը) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 20 տոկոս,

թ) զոհված (մահացած) զինծառայողների քրոջը կամ եղբորը՝ 10 տոկոս

ժ) Համալսարանի վճարովի համակարգում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ յուրաքանչյուրին 15 տոկոս,

ի) Համալսարանում առնվազն երեք տարի անընդմեջ հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող

d) 50 percent for students with children up to one year old,

e) for students of families with three or more minors or three or more students - 30 percent,

f) 30 percent for students with disabled 1st or 2nd group, including disabled combatant parents,

g) students who have completed compulsory military service included in combat duty in military units performing combat duty (in case of a corresponding entry in the military book) - 30 percent,

h) socially insecure students (families with an insecurity score higher than 0 in the family insecurity assessment system) - 20 percent,

i) 10 percent to the sister or brother of fallen (died) servicemen,

j) 15 percent for students from families having two or more students studying in the university fee system,

i) 20 percent for students and employees' children who have been working at the university for at least three consecutive years under a permanent employment contract,

l) For the graduates of the "European College of Armenia" and "French College of Armenia" foundations, for the 1st year of study upon admission to the University: 20 percent. Students admitted to the 2nd year of the University at once from the mentioned colleges have the right to a partial reimbursement of the tuition fee in the amount of 50 percent.

k) For the first year of the university graduates who continue their education in the Master's educational program of the university both full-time and part-time: 10 percent,

ուսանողներին և աշխատողների ուսանող զավակներին՝ 20 տոկոս,
լ) «Հայաստանի եվրոպական քոլեջ» և «Հայաստանի ֆրանսիական քոլեջ» հիմնադրամների շրջանավարտներին՝ Համալսարան ընդունվելիս 1-ին կուրսի ուսումնառության համար՝ 20 տոկոս: Նշված քոլեջներից միանգամից Համալսարանի 2-րդ կուրս ընդունված ուսանողները առարկայական տարբերությունները հանձնելիս օգտվում ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ 50 տոկոսի չափով:
խ) Համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրում առկա և հեռակա ուսուցմամբ կրթությունը շարունակող բուհի շրջանավարտներին ուսումնառության առաջին տարվա համար՝ 10 տոկոս,
ծ) Նախապատրաստական բաժնի շրջանավարտներին ուսումնառության առաջին տարվա համար՝ 10 տոկոս,
կ) առանձնահատուկ դեպքերում Համալսարանի ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

p) For the graduates of the preparatory department for the first year of study: 10 percent,
k) in special cases, according to the decision of the rector of the University, students with other status.

2.8. Սույն կանոնակարգի 2.7. կետի «ա», «բ», «գ», «դ», «ե», «զ», «է», «ը», «թ», «ժ», «ի» ենթակետերում նշված ուսանողական խմբերին ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրվում է առաջին կուրսի երկրորդ կիսամյակից բուհի կողմից բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) 75 տոկոս շեմը հաղթահարելու դեպքում:

2.8. According to 2.7 point of this regulation, for the student groups mentioned in sub-provisions "a", "b", "c", "d", "e", "f", "e", "h", "t", "j", "i" partial compensation of tuition fees is given in case of overcoming the threshold of 75 percent of the grade point average (GPA) set by the university in the bachelor's and master's educational programs from the second semester of the first year.

2.9. ՄՈԳ-ը հաշվարկվում է Համալսարանում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ

2.9.GPA is calculated using the knowledge evaluation scale operating in the University (accuracy to the hundredth). In case of equal

(հարյուրերրորդականի ճշտությամբ)։ Հավասար ցուցանիշների դեպքում միավորները հաշվարկվում են առանց կլորացման։ Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի, ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ և մասնակի փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը։

2.10. Ուսումնական մասը դիտարկում և անհրաժեշտության դեպքում շտկումներ և ճշգրտումներ է կատարում ուսման վարձավճարի լրիվ և մասնակի փոխհատուցման ցուցակներում, որից հետո ներկայացնում է Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը։

2.11. Գիտական խորհրդի կողմից հաստատված ցուցակները երկօրյա ժամկետում հրապարակվում են համապատասխան ֆակուլտետների հայտարարությունների համար նախատեսված ցուցատախտակներին։

2.12. Ուսանողական նպաստը տրվում է ուսանողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա նպաստառուի կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան, մահվան, ամուսնության վկայականներ, միջնակարգ կրթության ավարտական փաստաթուղթ, բժշկասոցիալական փորձաքննության եզրակացություն, բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացություն, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տեղեկանք, անաշխատունակության թերթիկ, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տեղեկանք և այլն)

indicators, the points are calculated without rounding. According to the progress of the GPA, the list of students entitled to full and partial reimbursement of the tuition fee of the given specialty of the given course is formed.

2.10. The educational department observes and, if necessary, makes corrections and adjustments in the lists of full and partial reimbursement of the tuition fee, after which it is presented to the Academic Council of the University for discussion.

2.11. The lists approved by the Scientific Council are published on the notice boards of the relevant faculties within two days.

2.12. The student loan is granted based on the application of the student or his legal representative and the necessary documents certifying the status of the beneficiary (passport, identification card, birth, death, marriage certificates, secondary education graduation certificate, conclusion of the medical and social examination, conclusion of the medical expert committee, draft and recruitment service of the RA Defense Ministry certificate, certificate of incapacity for work, certificate of the territorial body providing social services, etc.) after submitting it within the specified period.

սահմանված ժամկետում ներկայացնելուց հետո:

2.13. Ուսման վարձավճարի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն ընդունվում են առկա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքներին հաջորդող չորս շաբաթների ընթացքում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում: Սույն ժամկետների ավարտից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվում:

2.13. Tuition fee reimbursement applications are accepted in the case of existing training, within four weeks following the sessions of each semester of the given academic year, and in the case of part-time learning, within the two weeks preceding and following the sessions of each semester of the given academic year. Applications submitted after these deadlines will not be considered.

2.14. Երկու և ավելի կարգավիճակ ունեցող և մի քանի արտոնությունների հավակնող ուսանողը կարող է օգտվել մասնակի փոխհատուցման առավելագույն չափը նախատեսող մեկ արտոնությունից:

2.14. A student with two or more statuses and claiming multiple benefits has the right to use a single benefit providing the maximum amount of partial reimbursement.

2.15. Ուսումնական պլանով նախատեսված քննաշրջանի ժամանակահատվածում անբավարար գնահատական (չստուգված) ստանալու, քննությանը անհարգելի չներկայանալու դեպքում ուսանողները Համալսարանի կողմից տրամադրվող ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:

2.15. In the case of receiving an unsatisfactory grade (unchecked) during the exam period provided by the curriculum, or failing to appear in the exam, students are not entitled to a partial refund of the tuition fee provided by the University.

2.16. Մեկ ուսումնական կիսամյակի ընթացքում ուսումնական պարապմունքներին անհարգելի բացակայության դեպքում սովորողները Համալսարանի կողմից տրամադրվող ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում՝ ըստ հետևյալ ակադեմիական ժամերի.

2.16. In the case of unauthorized absences during one academic semester, students are not entitled to a partial refund of the tuition fee provided by the University, according to the following academic hours,

a) in the existing teaching system of the bachelor's educational program, in the case of 41 or more academic hours of

ա) բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում՝ 41 և ավելի ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում,
բ) բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգում՝ 15 և ավելի ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում,
գ) մագիստրոսի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում՝ 41 և ավելի ակադեմիական ժամ անհարգելի բացակայության դեպքում,
դ) մագիստրոսի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգում՝ 15 և ավելի ակադեմիական ժամ բացակայության դեպքում:

unauthorized absence,
b) in part-time learning system of the bachelor's educational program, in case of 15 or more academic hours of unauthorised absence,
c) in the existing teaching system of the master's educational program, in the case of 41 or more academic hours of unauthorised absence,
d) in part-time learning system of the master's educational program, in case of 15 or more academic hours of unauthorised absence.

2.17. Ուսման վարձի փոխհատուցման վերաբերյալ բողոքարկման դիմումները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Համալսարանի ռեկտորին:

2.17. Tuition fee reimbursement appeals are submitted to the rector of the university within three working days.

2.18. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդում գտնվելու, զինծառայության մեկնելու, հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու, ուսնողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու դեպքերում) ուսումնառությունն ընդհատած ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

2.18. In cases of being on academic leave, leaving for military service, being on leave for pregnancy, giving birth and taking care of a child up to three years of age, being sent to study abroad with educational exchange programs, a student who has interrupted his studies, while restoring his student rights, retains the right to receive the previous student subsidy.

2.19. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում բուհի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

2.19. In case of a change in the social status of the beneficiary student, the student subsidy provided by the university may be changed.

2.20. Վճարովի ուսուցման համակար-

2.20. A student reinstated in the system of

գում վերականգնված ուսանողը կարող է մասնակցել ուսանողական նպաստի հատկացման (փոխատեղման) համար անցկացվող մրցույթին առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:

paid education system can participate in the competition for the allocation (transfer) of a student subsidy after studying for at least one academic year.

## 3. ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## 3. SCHOLARSHIP ALLOCATION PROCEDURE AND CONDITIONS

3.1. Կրթաթոշակը ֆինանսական խրախուսանք է, որը տրվում է գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու, բուհի հեղինակության բարձրացմանը նպաստելու և այլ դեպքերում:

3.1. The scholarship is a financial incentive awarded for excellent and good performance, social activity, good behavior, contributing to the reputation of the university, and in other cases.

3.2. Հասարակական ակտիվությունը ուսանողի գիտակրթական և սոցիալ-մշակութային կյանքին ակտիվորեն մասնակցելու, նշանակալի ձեռքբերումներ և հաջողություններ գրանցելու, բուհի հեղինակությանը և վարկը բարձրացնելուն միտված գործունեությունն է:

3.2. Public activity is the activity aimed at actively participating in the student's scientific-educational and socio-cultural life, recording significant achievements and successes, increasing the reputation and credit of the university.

3.3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները օգտվում են կրթաթոշակից բուհում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

3.3. Children left without parental care benefit from a scholarship in the amount of 150 percent of the stipend established at the university, according to the RA Law "On Social Protection of Children Left Without Parental Care".

3.4. Համալսարանում սահմանված կրթաթոշակի չափը կազմում է 5000 ՀՀ դրամ:

3.4. The amount of the scholarship established by the university is AMD 5000.

3.5. Կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր տարի սույն կարգի 3.1. կետ համապատասխանությունը ճշգրտելու համար: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է կրթաթոշակից:

3.5. Granting of scholarships is reviewed every year according to 3.1 of this order. point to adjust the fit. If the stipulated conditions are not met, the student is deprived of the scholarship.

3.6. Համալսարանը կարող է սեփական միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին սահմանել անվանական կրթաթոշակներ:

3.6. The University may establish nominal scholarships from its own funds and other funds not prohibited by law.

***Հավելված/Appendix 1***

| **Սովորողների ընդհանուր թիվը խմբերում/ Total number of students in groups** | **0-19** | **20-29** | **30-39** | **40-49** | **50 և ավելի/ and more** |
|---|---|---|---|---|---|
| լրիվ փոխհատուցում 100 %/full reimbursement 100% | 0 | 1 | 1 | 2 | 2 |
| մասնակի փոխհատուցում 50 %/partial reimbursement 50% | 0 | 1 | 2 | 2 | 3 |